

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գին 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Ուսանողի համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից հեռագրություններ:
Օտարապետացիք դիմում են քաղաքի
Դուխա. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:
Յայտարարութիւնների համար զմարում են
իրարմանիւր ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձեռնարկ:
Անդրա: Առաջին-Ունգարիա: Նամակ
Թիֆլիսից: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լուրեր:
— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՏԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ընթերցասիրութիւնը
մեր ժողովրդի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Հուլի 19 սեպտեմբերի

Այս տարվայ սկզբից Հայաստանի
չափան դրամներն են և մեր նպատակն
էր գաւառացի ժողովրդի ու մանուկների ընթերց-
ցաւթեան համար հեշտ հասկանալի գրքային
հրատարակել և մի և նոյն ժամանակ մեր կա-
րողութեան չափով միջոց տալ երիտասարդի հե-
ղինակներին և թարգմանիչներին իրենց աշխա-
տութիւնները լոյս ընծայելու: Մեր հրատարա-
կութիւնների առաջին սերիայի համար բաժա-
նորդագրութիւն բացինք, ոչ այն նպատակով,
որ նրանց ստացած փողով առաջ տանէինք
հրատարակչական գործը, այլ որպէս զի ըն-
թերցողների մի որոշ թիւ ի նկատի ունենալով
նրա համեմատ քանակութեամբ հրատարակէինք:
Թէև բաժանորդների թիւը 200-ի անգամ չը հա-
սաւ, բայց մենք չը յուսահատուցինք, այլ որո-
շեցինք ամեն մի գրքային տպել մի մի հազար
օրինակ և ցրվել գաւառներում, սրա համար մի
քանի տեղեր մեզ՝ աշխատակիցներ ընտրեցինք,
որոնք յանձն առան մեր հրատարակութիւննե-
րը փաճառելու: Հաղիւ թէ հրատարակեցինք և
րեք գրքով, յանկարծ առաջ եկան այնպիսի
արգելադրութիւններ, որոնց նախատեսել ամենե-
ւին կարող չէինք: Ճշմարիտ է, ձեռնարկելով
հրատարակչական գործին՝ ունէինք ի նկատի մի
քանի դժուարութիւններ և նրանցից ամենագլ-
խաւորը ներթափանց էինք կարծում, բայց այն
բոլորի համար վաղօրօք մտածել էինք և մեր
բիւջէտը կազմել, մինչև անգամ եթէ չունենա-
յինք ոչ մի բաժանորդ՝ այնու ամենայնիւ կա-
րող էինք դոնէ առաջին սերիայի համար մեր
խոստացած վեց գրքայինները հրատարակել և հէնց
դիմեցինք բաժանորդագրութեան միայն այն ժա-

մանակ, երբ հրատարակութիւնների առաջին հա-
մարը մամուլի տակից դուրս գալու վրա էր:
Մի կողմից անակնկալ խոչընդոտները, իսկ
միւս կողմից համակրական նամակները, թէ՛ ծա-
նոթներից, թէ՛ անծանօթներից մի տեսակ պարտե-
ւէին դնում մեզ վրա չարունակել այս գործն ա-
ռանց յուսահատուցելու: Լրագրութիւնը ևս իր
կողմից մեր հրատարակութիւնների մասին մի մի
համակրական խօսք ասաց:

Այժմ այս բոլոր համակրական ցոյցերը և
խրախուսանքը, կարծես, մի մի ծանր մուրճ
լինեն մեզ ճնշելիս, որ շտապենք մեր խոստում-
ները շուտով կատարել:

Չը կամենալով էլ աւելի ուշացնել միացեալ
երեք գրքայինների լոյս ընծայելը և չը սպասել
թէ ինչ վախճան կունենան այս արգելադրութիւն-
դէմ մեր բռնած ընթացքը, որպէսզինք խոստա-
ցածների փոխարէն ուրիշ գրքայիններ հրատարա-
կել, որոնց արժանաւորութեան քննադատու-
թիւնը նրանց լոյս տեսնելուց, հասարակաց
կարծիքին ենք թողնում:

Առաջին սերիայի մեր բաժանորդները ոչ
թէ կը ստանան միացեալ երեք գրքային փոխա-
րէն ուրիշ երեք գրքով, այլ աւելի՛ գուցէ 4—5,
ուստի խնդրում ենք նրանցից չը վհատվել զըր-
բայիններ ու չստանալու համար, որովհետև
ինչպէս ասացինք, մեզանից բոլորովին անկախ
և անակնկալ պատճառներ խոչընդոտ են լի-
նում...

Խնդրում ենք նոյնպէս մեր հեղինակներից և
թարգմանիչներից ուղարկել մեզ ըստ մեծի մա-
սին մանկական, ժողովրդական գրքայիններ,
որոնց բովանդակութիւնը առաւելագոյն մեր
կեանքին յարմար լինի և կամ նրանից առած,
որպիսիները սիրով կընդունենք և չափաւոր
վարձատրութիւնով կը հրատարակենք:

Տ. Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ հաղորդում են մի գաւառական քաղա-
քից, որ այս օրերս ուղեորվում են դէպի Նշմիա-
ծին չորս հայ երիտասարդներ Մանկունու
խնդրելու որ չըհաս պատկերներ հասցնեն:

ԲՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են: «Կուր շատ
անգամ խօսել էք ձեր լրագրում հայ-կաթօլիկ-
ների մասին, բայց մեր Գութայիսի հայ-կաթօ-

լիկների մասին մեզ երբեք չէ պատահել որ և է
տեղեկութիւն կարողաւ «Մշակի» մէջ: Այն ինչ,
զրանք իրանց տարօրինակ հայեացքներով արժա-
նի են առանձին ուշադրութեան: Երբ որ դիմում
էք այդ տեսակ փրանգ ասված հայ-կաթօլի-
կին, հարցնելով նրան թէ ինչ ազգութեան է
պատկանում, նա ձեռք երբեք չի խոստովանվի
թէ հայ է, այլ վրացիների առջև կասի թէ վրա-
ցի է, իսկ հայերի առջև կը սկսի հաւատացնել
որ իւր պապերը Ֆրանսիայից, Իտալիայից կամ
Սպանիայից գաղթել են կովկաս և այդ տար
գաղթականներից է ծագում ինքն, ուրեմն բուն
փրանգ է, չը նայելով որ կրում է Գալորով,
Բարիլուսով, Չարէթով, կամ այլ սրա նման,
բուն հայոց ազգանուն: Մարդս չուարում է,
երբ մտածում է որ տասն և իններորդ դարում
կարելի է այնքան իղիօտ լինել, և այն աստի-
ճան ենթարկվել դաւաճան հոգեորականներին,
իր ազգութիւնը կոյր կրօնական ֆանատիկոսու-
թեանը գոհնելով: Ինչպէս կրեւում է կաթօլիկ
հոգեորականութիւնը ամենամեծ թշնամի է ազ-
գային գաղափարի:

Այս օրերս մի խումբ արքայազնների, թոյնե-
լով Թիֆլիս, ուղեորվեցին քահանայ ձեռնադրե-
լու: Նրանք բոլորն էլ այն աստիճան տգէտ
և անգրագէտ մարդիկ են, ասում են նրանց ճա-
նաչողները, որ Ներսիսեան դպրոցի առաջին
դասաւան աշակերտները նրանցից աւելի ու-
սումական կարող են համարվել: Միթէ ժողո-
վուրդը չի բաց անի իր աչքերը և վերջ չի դնի
այդ տեսակ անկարգութիւններին և զեղծում-
ներին: Չը պէտք է մոռանանք, որ այդ տգէտ
արքայազնները այսօր կամ վաղը մեր քաղաքի-
նեք, մեր հովիւներ պէտք է դառնան:

Մեզ պատմում են հետեւեալ անցքը: Ամսոյս
17-ին, ուրբաթ երեկոյան, Թիֆլիսի վանքի
մայր-եկեղեցում ժամերգութիւնը աւարտելուց
յետոյ, ժամկոչը փակում է եկեղեցու դռները:
Բայց այդ ժամանակ եկեղեցու մէջ թաղում է
մի գող, որ զիչերը կտրում է զանաւանակի մի
արկղ և նրա մէջ եղած մի քանի բուրդ փող գո-
ղանում է: Առաւօտ, երբ ժամկոչը կրկին բաց է
անում եկեղեցու դռները, գողը փախչում է մի
դռնից, բայց անմիջապէս բռնվում է և յանձն-
վում է պոլիցիային:

Չորս տարի սրանից առաջ, Նախկին մեռելութե-
անից և դատապարտելի քնից այժմ զարթել է նա
և զարմանալի չէ, համալսարանային քաղաքական
անցքերը, հայկական հարցի ծնվելը, Տաճկաս-
տանի ընդհանուր ուսումնարանական հարցը և
Արարատեան ընկերութիւնը, ահաւել սովը Հա-
յաստանի և այլն և այլն, չէին կարող չազդել
կովկասի հայ ժողովրդի վրա և նա այժմ սթափ-
ված է, նա զգում է մտաւոր պահանջ և նորա
պահանջները դեռ ևս մեծ չեն և դժուար բաւա-
րարութիւն ստանալու: Նորան պէտք է այժմ ա-
մենադիւրամար հետաքրքրութիւն չարժող գըր-
քեր տալ: Նորան այժմ կրէպներն և խորհա-
ցիներ հարկաւոր չեն, պէտք է տալ նորան՝ Ու-
կի աքաղաղ-ներ, «Չէլալեղին»-ներ: Ինձ շատ
անգամ պատահում է լսել մեզադարձներ, որ
հայ ժողովուրդը ընթերցասէր չէ, մտաւոր պա-
հանջ չէ գզում և դուր ինքնեղ «Մշակի» 142
համարում վերջնականապէս հաստատում էք այդ
բանը, լինելով, որ «հայոց հասարակութեան մէջ
դեռ չը կայ մտաւոր կեանքի անհրաժեշտութեան
պահանջ, որ մեղանում ամենից քիչ վարձա-
տրվող պարագագործները՝ մտաւոր կեանքի պա-
րագործներն են»: Եւ ոչինչ չունեն ասելու
այդ դիտողութիւնների դէմ, միայն կաւեւացնեմ,
որ այդ տխուր երևոյթի գլխաւոր պատճառը հէնց
մեր ինտելլիգենցիայի մեծագոյն անտարբերու-

«Новое Время» լրագրում տպվել է մի յո-
ղուած հայոց խնդրի մասին: Այդ յոդուածի հետ
մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին հե-
տեւեալ համարում:

Նրէկ, ուրբաթ օր, 25-ին սեպտեմբերի (7-ին
հոկտեմբերի) պրօֆեսոր Վիրիսով ուղեորվեց ֆո-
թի. Թիֆլիսեան երկաթուղով դէպի Գերմա-
նիա: Մօտ յիսուն հոգի թէ բժշկներ, թէ ծա-
նօթների նրան ճանապարհ էին գցում:

Թիֆլիսի դատաստանական պալատում սեպ-
տեմբերի 23-ին վերջացաւ սուտ թղթագրում շի-
նոդների գործը: Կատաստանական պալատը հաս-
տատեց Նահանգական դատարանի վճիռը և բո-
լոր մեղադրվածներին, որոնք, ինչքան յիշում
ենք, թուով քառասունից աւելի էին, դատապար-
տեց, իսկ միայն մի մեղադրվածին՝ արդարաց-
րեց:

Լսում ենք, որ ամսուս 22-ին ի պատիւ մեր
գիտնական հայրենակից պ. Էմիլի տուած ճաշ-
կերպով շատ աջող է վերջացել: Մանաւանդ
ուրախալի է լսել, որ այդ ճաշկերպով մի շո-
շափելի հետեւանք է թողել, անուրաց պահե-
լով պ. Էմիլին յիշատակը և կապելով նրա անու-
նը Թիֆլիսի մի ազգագուտ հիմնարկութեան
անուան հետ: Ճաշի ժամանակ առաջարկութիւն
է եղել մի թոշակ (субсидия) հիմնել պ. Էմի-
լին անունով Գալիսեանեան օրրորդաց դպրոցում,
որ և ընդունվել է և քաւորդ ժամում 1,100
բուրդ է ժողովվել: Յանկալ է, որ իւրաքան-
չիւր հանդիսաւոր ճաշկերպով այսպիսի հետեւանք
թողնել իր հետքից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ
նորից սկսվեցան յուլիսին ընդհատված բա-
նակցութիւնները առեւտրական դաշնագրի
մասին Ֆրանսիայի և Անգլիայի մէջ: «Temps»
լրագրի տեղեկութիւնների համեմատ այդ

թիւն է դէպի ժողովրդի ամենակենսական պա-
հանջները: Միթէ մենք մինչև այժմ չը պէտք է
տարածած լինէինք ժողովրդի մէջ ահագին քա-
նակութեամբ ամենաթանկ, եթէ ոչ բոլորովին
ձրի, գրքեր, հետաքրքրի գրուածքներ, ձվ կարող
է ուրանալ, որ մենք գրքեր չունենք և ունեցած-
ներս բոլորովին անմատչելի են ժողովրդին: օրի-
նակի համար «Խենթը» արժէ 1 ր. 20 կ., «Կա-
ւիթ բէգ»-ի ա. և բ. մասերը, որ փոքր զիւր է,
1 ր. 50 կ.: Հարցնում եմ այժմ, միթէ հասարակ
դասը, օրինակ դարբինը, կամ հայ մագործը կա-
րող է այդքան փող վճարել մի գրքի համար:
Ուստի մենք մեղադրել, որ ժողովուրդը ընթեր-
ցասէր չէ, իրաւունք չունենք, միթէ թարգմա-
նաւ այժմ նորանով, որ մեր ժողովուրդը սկսել
է հետաքրքրվել, որ նրա մէջ սկսել է նշարվել
սէր դէպի ընթերցանութիւն թէև դեռ ամենա-
աղօտ կերպով: Եւ դեռ Թիֆլիսում նկատում էի
այդ բանը և բոլորովին համոզվեցայ երբ յու-
նիս ամսին դնացի Երեան այնտեղ ամառը անց
նետու համար. ինձ շատ անգամ պատահում էր
ծանօթներին, կամ բարեկամներին-ազգականներին
տեսնելու տեսնել, օրինակ այսպիսի մի տեսարան:
մի երեկայ նստած կղկղալով կարդում է «Պոնտե-
քաղաք»-ից Ալէքսիանտիս պատմութիւնը. ամեն-
քը լարած իրենց ուշադրութիւնը լսում էին
(բաւեց ցրաւ): Կարդացողին և ուստիկ զգածված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԹԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ

Ընթերցասիրութիւնը այն միջոցներից մէկն է,
որը ցոյց է տալիս մի անհատի, հետեւաբար և
մի ամբողջ ժողովրդի զարգացման աստիճանը:
Որքան մի անհատ կամ մի ժողովուրդ աւելի
զարգացած է, նոյնքան և աւելի ընթերցասէր է,
որովհետև զարգացումը և ընթերցասիրութիւնը
այնքան սերտ կապ ունեն միմեանց հետ, որ մէ-
կը առանց միւսի գոյութիւն ունենալ կարող
չէ: Այս անհերքելի ճշմարտութիւնը շատ պարզ
է կատարվում է և գիմնավայր աշակերտների վերա-
բերութեամբ: Այն գիմնավայրական աշակերտը, որ
ուժ տարի անցել է միայն գիմնավայրի մէջ ա-
ւանդվող աւարկանները ուսանելով, այլ ընթեր-
ցանութիւնով չէ պարագել կանոնաւոր կերպիւ,
եղել է միշտ մի և նոյն նեղ գաղափարների տեղ
մարդ, ինչպէս են իր ծնողները, կամ ծանօթնե-
րը, որոնք ոչ ընթերցանութեան և ոչ գիմնա-
գիայի հոտ են առել: Գառնալով այժմ յոդուած
ծիւ բուն նպատակին: Եւ յիշել, որ զարգացումը

բանակցութիւնները կը հասցնեն ցանկալի
հետեւանքներու շնորհապետական լրագիրնե-
րը բաւականութիւն են յայտնում, որ Ան-
գլիայի և Ֆրանսիայի մէջ կատարեալ հա-
մաձայնութիւն է կայացել առեւտրական
դաշնագրի և եզրապտական դժուարութիւն-
ների վերաբերութեամբ: „R  publique
Fran  aise“ լրագիրը նկատում է, թէ Եւ-
րոպայի երկու առաջադէմ ժողովուրդները,
Ֆրանսիացիք և անգլիացիք միջազգային քա-
ղաքականութեան վերաբերութեամբ պէտք
է ձեռք ձեռքի տուած ընթանան և նրանք
եզրապտական դժուարութիւնները վերջա-
նելու համար բոլորովին պէտք չունեն դի-
մել թիւրքերի օգնութեանը:

Նախագահ Գրեվի, մինիստրութեանից հե-
ռազիր ստանալով պատգամաւորների ժողո-
վի բացման շտապեցնելու մասին, պատաս-
խանեց, որ նա այդ միջոցի դէմ ոչինչ չու-
նի: Անգլիացիք 20-ին կայացաւ մինիստր-
ների խորհուրդը Տոնիսի և Ալֆրիդայի մէջ
եղած պատերազմական ծախսերը ծածկե-
լու հարցը քննելու համար: Հաւատարմութեամբ
են, որ Ֆինանսների մինիստր հրաժարվում
այսուհետեւ դրամ տալ առանց պատգամա-
ւորների ժողովի գիտութեան: Նա յայտնել
է, որ կը հրաժարվի իր պաշտօնից, եթէ
ազգային ժողովները անյապաղ չեն գումար-
վի:

Տոնիսի բէյ բողոքեց իր մայրաքաղաքը
Ֆրանսիական զօրքերով գրաւելու դէմ:
Ֆրանսիացիները պատրաստվում են արշաւել
Կէյրուանի վրա: Ապստամբված արաբների
մէջ շատ թնդանութեամբ կան, որոնք
փախել են բէյի զօրքից: Փարիզի և գա-
ւառների ժողովրդական ուսուցիչները և
վարժուհիները ստորագրութեամբ մի ճաշ
տուէին ի պատիւ Պոլ Բէրի, որ ժողովրդա-
կան լուսաւորութեան ապագայ մինիստր է
համարվում: Ճաշի ժամանակ բեր մի ճառ
արտասանեց, որի մէջ ի միջի այլոց նկա-
տեց, թէ անհրաժեշտ է վերականգնել Ֆը-
րանսիայի նախկին սահմանները:

Ֆրանսիական բոլոր լրագիրները համակ-
րութեամբ վերաբերվեցան Գարֆիլդի յի-
շատակին, մատնացոյց լինելով այն բարե-
կամական յարաբերութիւնների վրա, որոնք
տեղի պէտք է ունենան Ֆրանսիական և
ամերիկական հանրապետութիւնների մէջ:
Նախագահ Գրեվիի ներկայացուցիչը և Ֆը-
րանսիական բոլոր մինիստրները այցելեցին
Միացեալ Նահանգների ղեկավարին Փարիզում:
Փարիզի մէջ ամենքը զարմացած են, որ

վերջին ժամանակներում չափազանց շատ
զօրքեր են ուղարկվում հիւսիսային Աֆրի-
կա, մինչդեռ մի քանի օրվայ ընթացքում
Ալֆրիդայից և Տոնիսից ոչինչ տեղեկութիւն
ներ չեն ստացվում գործերի դրութեան մա-
սին: Անգլիացիք 20-ին հեռագրական հա-
ղորդակցութիւնը Ալֆրիդայի հետ ընդհատ-
ված է: Այդ հանգամանքը աւելի էլ ան-
հանգստացնում է հասարակութեանը այն
պատճառով, որ յայտնի չէ արդեօք հա-
ղորդակցութիւնն է ընդհատված, թէ կա-
ռավարութիւնը վատ տեղեկութիւններ է
ստանում և նրանց ծածկում է:

Ֆրանսիական հանրապետական լրագիրնե-
րը զբաղված են սահմանադրութեան վե-
րաքննութեան և սենատի փոփոխման հար-
ցերով: Այդ գործին չեն խանգարում ոչ
աֆրիկական գործերը և ոչ Անգլիայի հետ
կապվելի առեւտրական դաշնագրի հոգսերը:
Սենատը մի քանի սխալներ գործեց. նա
այնպէս չէր վարվում, ինչպէս ցանկանում
էր պատգամաւորների նախկին ժողովի մե-
ծամասնութիւնը, հետեւեալ պէտք է ո-
չնչացնել այդ վերջին արգելքը, որ ստեղծ-
ված է 1875 թուականի սահմանադրու-
թեամբ: Սենատի կազմակերպութիւնը դեռ
ևս կատարելապէս հանրապետական չէ:
Նրա մէջ բաւական շատ նշանաւոր պահ-
պանողականներ կան: Ուրեմն պէտք է ո-
չնչացնել յետագիւմութեան այդ վերջին նե-
ցուկը Ֆրանսիայի մէջ: „R  publique Fran-
  aise“ լրագիրը վերջին ժամանակներում
անդադար այդպիսի քարոզներ է տպում:
Բացի հանրապետական լրագիրներից արմա-
տականներն էլ պահանջում են վերաքննել
սահմանադրութեան այն յօդուածները, ո-
րոնք սենատին են վերաբերում:

1882 թուականին սենատի սնդակների
մի մասը պէտք է փոփոխվի: Նոր ընտրու-
թիւնների հետեւանքը երեւի ձեռնառու կը
լինի հանրապետութեան համար: Այդպի-
սով սենատի մեծամասնութիւնը ինքն ըստ
ինքեան հանրապետական կը դառնայ: Այժ-
մեան հիմնարկութիւնների հաստատութեան
համար հանրապետականները կարող են մի
տարի էլ սպասել, որպէս զի իրանց թշնա-
միների ձեռքը փոխադարձ դէպք չը տան:
Բայց „R  publique Fran  aise“ և նրա
համախոհները ոչինչ նշանակութիւն չեն
տալիս այդ հանգամանքին:

Լալիս էին, երբ նա կարդում էր Ալէքսանդր Դումայի
տանջանքները: Նրբեւ հարցնում էի, ինչի ուրիշ
նոր նոր գրքեր չեն կարդում, նոքա միշտ մի և
նոյն պատասխանն էին տալիս, որ չունեն և շատ
կը ցանկանային ունենալ, եթէ մէկը ուղարկէր
նոցա ընթաց լաւ լաւ գրքերից մի քանի հատ:
Ես ի հարկէ ցոյց էի տալիս ամեն տեղ, թէ ինչ
հեղինակութիւններ օգուտ է նոցա կարդալ և
որտեղ կարելի է ձեռք բերել. այսպիսի ընտա-
նիքներ շատ և շատ պատահեցին ինձ. միայն ա-
մեն տեղ նոյն նախապետական գրքերը:

Վճարուեալ մեծ մասը ես անցրի Նորգում, որ
երեւանի թաղերից մէկն է, Թոգ ներքէ ինձ ընթեր-
ցողը բոլորովին չեզոք մի փոքր յօդուածիս
բովանդակութիւնից և ասել երկու խօսք Նորգի
մասին. Նորգը, ինչպէս ասացի, երեւանի թաղե-
րից մէկն է, քաղաքից 3 վերտո հեռու ընկած,
վճարում է քաղաքացիութեան բոլոր հարկերը
և մի և նոյն ժամանակ դուրի է բոլորովին քա-
ղաքացիութիւնից. ոչ ճանապարհ ունի, ոչ յար-
մարաւոր փողոցներ, ոչ լապտերներ, ոչ գիշերա-
պահներ, վերջապէս ոչինչ չունի, որ Նորգեցին
կարողանայ ասել. Հայո, երեւանը ստանում է
մեզնից հարկ և մի և նոյն ժամանակ ծախսում
է մեր հասարակութեան պիտոյքների վրա, կարճ
ասել՝ Նորգը երեւանի համար խորթն է, որի
որին խորթն մայրը գրկում է բոլոր ամենամա-

հրաժեշտ բաներից: Ահա այս Նորգումն էի ես,
Ալյստեղ ամեն քաղաքիսում պատահում էին
ինձ մի և նոյն տեսարանները. բայց Նորգի ժո-
ղովրդը աւելի հեռու է գնում, նա հիմնել է
մի ընթերցարան, որ մեծ պտուղ է բերում իրեն
և որի հաստատման թուղթը շուտով կը ստացվի
ս. Ելմանդին: Երեւանը կամ քաղաք ժամա-
նակները հաւաքվում են այստեղ Նորգեցիք և
կարդում են. բայց ցաւ է սսել, որ այստեղ ես,
ինչպէս առհասարակ, գրքեր չաւ քիչ են և չա-
տեղը ստիպված են լրագրերով բաւականանալ:
Այս փաստերը ես բերեցի ցոյց տալու համար,
որ ընթերցասիրութիւնը սկսել է մուտ գործել
մեր ժողովրդի մէջ. այժմ աւելի քան երբ և իցէ
հարկաւոր է ժողովրդի դիւրամարտ գրքեր մա-
տակարարել ամենամարման գներով: Այստեղ մեծ
դեր կը խաղային պ. Մելիքզադէի—Բաֆֆիի,
այս մեր քանքարաւոր բանաստեղծի մասը վի-
պաստութիւնները, որոնք, ես հաւատացած եմ,
մի տարում դուրս կը վաճառեն բոլոր տներից
Պոլիսէ քաղաքը: Ներքէ և սրա նման շատ ուրիշ
անօգուտ գրքեր, միայն, կրկնում եմ, գրքերը
պէտք է ամենամատչելի լինեն: Շատ անպա-
տակ է մեզանում այժմ հրատարակել այնպիսի
գիտարարմարս գրքեր, որոնք ոչնչով ժողովրդի
մէջ հետաքրքրութիւն չէին կարող շարժել: Օրի-
նակի համար. ում համար է թարգմանված Կրէ-

ԱՆԳԼԻԱ
Անգլիացիք 15-ին Կուրլինի մէջ կայա-
ցաւ կալուածական միութեան ժողովը, ո-
րին մասնակցում էին 1300 անդամներ: Ժո-
ղովին նախագահում էր Պայնել: Նա խըս-
տութեամբ քննադատում էր կալուածական
օրէնքը, աւելով, որ այդ օրէնքի նպատակն
է ոչնչացնել կալուածական միութիւնը—
Նա իր նախագիծը ձեւակերպեց, պահան-
ջելով կատարելապէս ոչնչացնել կապալա-
վարձը: Վերջը ժողովը վճիռ կայացրեց, որ
հետեւեալ պահանջներ է անում. դատա-
պարտել ստիպողական օրէնքները, յայտնել,
որ կալուածական օրէնքը չէ կարող երկիրը
խաղաղացնել, մինչև չարձակվեն կալանա-
ւորված իրանդացիները և մինչև իրանդիա-
յին կատարեալ ինքնավարութիւն չը շնորհ-
վի:

Լոնդոնի մէջ կայացաւ ժողովրդական
միութեան ժողովը, որին մասնակցում էին
մօտ 1000 մարդ, զխաւորապէս բանւորներ:
Ժողովը ամենաարմատական վիճակը կայաց-
րեց, ի միջի այլոց լորդերի ժողովի ոչն-
չացնելու և հողերը ժողովրդին յանձնե-
լու մասին: Մեծ հաւանութեամբ ընդուն-
վեցաւ օրիորդ Կրեգանի արտասանած ճա-
ռը, որով նա նկարագրեց իրանդացի բան-
ւորների դժբաղդ վիճակը: Բոլոր խօսողնե-
րը պահանջում էին, որ պարլամենտը ժո-
ղովրդի իսկական ներկայացուցիչը լինի և
որ Անգլիան ազատվի արիստոկրատիայի և
հոգեւորականութեան ճնշումից, բայց մի-
և նոյն ժամանակ ամենքը պնդում էին, որ
նրանք օրինաւոր վերանորոգութիւններ են
ցանկանում և ոչ թէ արիւնհեղ յեղափո-
խութիւն:

Իրանդական ազգային խորհրդի նիստի
ժամանակ Պարնել յայտնեց, թէ նա իրան-
դական երկրագործների հետ խորհրդակցել
է և նրանք պատրաստակամութիւն են յայ-
տնել հնազանդվել իրանդական միութեան
կարգադրութիւններին: Այնուհետեւ կար-
գացվեցան նոր հեռագիրներ միութեան ա-
մերիկական բաժիններից, որոնք ամենքն էլ
վերջանում են հրաւերով չը վճարել կալ-
ուածական տուրքերը: Մի քանի հեռագիր-
ների մէջ սպառնալիքներ են յայտնված
այլ ևս դրամական օգնութիւն չանել, եթէ
իրանդացիք հակառակ նրանց ցանկութեան
վճարեն կալուածական տուրքերը:

Այլ-ի հեղինակութիւնների ա. մասը.—ն գիտե-
ղացէ շուտով բ. ես լոյս կը տեսնի—հայ ժողո-
վրդի համար, թէ նրա ինտելլիգենցիայի համար.
առաջին դէպքում գիրքը բոլորովին անպատաս-
է. այս պարզ է, ինչպէս լոյս: Իսկ երկրորդ
դէպքում, բոլորովին աւելորդ, որովհետեւ ա. ին-
տելլիգենցիան Վրէպերի հասկանալու համար
գիտէ անգլիերէն, ֆրանսիերէն, գերմաներէն: ա-
մենաքիչը ռուսերէն, իսկ բ. ժողովրդի շահերը
չը պէտք է զոհել ինտելլիգենցիայի շահերին,
որովհետեւ այս վերջինը առանց այդ ևս բաւա-
կան տպահովված է հետզհետէ զարգանալու հա-
մար: Այստեղից բխում է անհրաժեշտութիւնը
մի մասնաժողովի, որի պարտքը կը լինի
հաւաքել յարմարաւոր գրքեր դանազան լեզու-
ներով և առաջարկել թարգմանել այն թարգմա-
նիչներին, որոնք, փառք Աստուծոյ, մեզանում
շատ կան և որոնք չնորհիւ, թող ներքի ինձ ա-
սել, մեր լեզուն դարձել է կատարեալ խօսու.
այդ գրքերը կը թարգմանվեն և յետ կուղարկ-
վեն մասնաժողովին, որը կը արագորէր և ըստ
կարողութեան կաշխատէր մի ուղղութիւն տալ
թարգմանված գրքի լեզուին, ոճին: Ես կարծում
եմ, որ մեծ բարիք կը լինի մեզ համար, եթէ
մեր յարգելի բանաստեղծ պ. Բաֆֆին կը ստանձ-
նէր այդ մասնաժողովի մէջ նախագահութեան
պաշտօնը և կաշխատէր իր աննման լեզուն մոց-

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԻԱՐԻԱ
Ի նկատի առնելով Վիեննայի լրագիրնե-
րի դատողութիւնները և հաղորդութիւն-
ները, կարելի է մտածել, որ Աւստրո-Ուն-
գարիա ցանկանում է մօտենալ Ռուսաստա-
նին: Այդ անսպասելի ցանկութիւնը երեւե-
ցաւ կայսրների տեսութեանից յետոյ Դանցի-
գի մէջ և երեւի այդ անցքի ուղղակի հե-
տեւանք է: Աւստրո-Ունգարիայի մէջ կայսր-
ների տեսութեանից յետոյ ոչ ոք չէր
մտածում քաղաքականութեան այդպիսի
փոփոխութեան մասին: Ոչ ոք չէր մտա-
ծում այդ անսպասելի անցքի մասին, այն-
պէս որ աւստրիական կառավարութիւնը չը
կարողացաւ գործ դնել հարկաւոր միջոց-
ներ և նախապատրաստել հասարակական
կարծիքը: Աւստրիական պաշտօնական և
կիսապաշտօնական լրագիրները առաջ այն
միտքն էին յայտնում, թէ աւստրո-գերմանա-
կան դաշնակցութիւնը կարող է Ռուսաստա-
նի դէմ թշնամական ուղղութիւն ստանալ,
այժմ նոյն լրագիրները յիշում են երեք
կայսրների դաշնակցութիւնը և պնդում են,
թէ աւստրիական և ռուսաց կառավարու-
թիւնների համար անհրաժեշտ է համե-
րաշխութեամբ գործել: Այս գործը բաւա-
կան դժուար էր, բայց աւստրիական խըմ-
բագիրները կատարեցին նրան իրանց սովո-
րական ծարպիկութեամբ: Աւստրիական մա-
մուլը այժմ լուր է տարածում, որ շուտով
ռուսաց և աւստրիական կայսրները կը
տեսնվեն և որ այդ տեսութիւնը վերջ կը
դնի այն անբաւականութիւններին, որոնք
տեղի են ունեցել Ռուսաստանի և Աւստրո-
Ունգարիայի մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԲԻԱՅԻՑ
Կ. Պոլսի, 11 սեպտեմբերի

Շատ ուրախալի է տեսնել Մշակի մէջ Jour-
nal d'Orient-ի գործը յաջողութեան մէջ. բաժա-
նորդ գրովորների մէջ շատերին հաճութեամբ իմ
բարեկամներից եմ տեսնում. թող օրհնի նո-
ցա բարի եռանդը, բայց երբ նոքա այդպիսի ազ-
նիւ են և հայրենասէր, թող նոքա չը զլանան ևս
իւրաքանչիւրը իր կարողացածին չափ օգնել մեր
նորահաստատ օրգանին նոյնպէս և իրանց յօ-
դուածներով. այս մասին մանաւանդ պիտի խնդ-
րած մեր ընդհանուր բարեկամ Լևոն Տիգրանեան-
ցից, որը լինելով Հայաստանի սահմաններից մօտ,
կարող է շատ բաներ իմանալ տաճկահայերի
դրութիւնի և գերմաներէն լեզուով հաղորդել
մեր օրգանին: Մի մոռանաք, որ Կ. Պոլսի վրա

նախ բոլոր թարգմանութիւնների մէջ, այս կը
լինի միակ զխաւոր միջոցը, որ կազատէր մեր
աշխարհաբառը Բաքեւոնեան աշտարակայնու-
թիւն դառնալուց: Ես կարծում եմ, որ պատուե-
լի թարգմանիչները զանազան գրքեր ոչ թէ կը
վերաւորվեն այս իմ առաջարկութիւնից, այլ
ընդհակառակը կը համակրեն, եթէ նրանք ճշմա-
րիտ ցանկանում են մշակել մեր լեզուն, իսկ մի-
շակել այն ճանապարհով, ինչպէս այժմ է այդ
լինում, սաստիկ կանկածելի է... Ինքնուրոյն գը-
րուածների մէջ ամենամեծ տեղը կը տրվէր վի-
րոյիչած մեր բանաստեղծի վէպերին, և շատ
յարմար կը լինէր, որ առաջին ժամանակները
բացառապէս տպագրվէին հենց այդ վէպերը,
որոնք ցրված են «Մշակ»-ի զանազան համար-
ների մէջ զանազան տարիների շարքում. հարցը
հենց նրանումն է, որ առաջին միջոցները որքան
կարելի է շատ դիւրամարս վիպասան ու-
թիւններ տալ ժողովրդին և զխաւորապէս
ներկայ կենսեցից:

Այս հարցը այնքան նշանաւոր է մեր ժողովր-
դի յաջողութեամբ ու կանոնաւոր զարգացման հա-
մար, որ, իմ կարծիքով, աւելորդ չէր լինի եթէ
յարգելի իմաքաղութիւնը բարձրացնէր Հայկիրս
մէջ վիպաստութիւններ տարածելու հարցը և
բազմակողմանի մշակէր նրան:

Մօսկվա Ա. Կ.—եանց

չէ կարելի մեծ յոյս դնել այստեղ միայն խօսքով եւ ազգայնէր. ոչ բաժանորդ գրովոյ կը լինի, ոչ էլ յօդուածներով օգնող, իսկ Հայաստանի խեղճ ժողովրդի վիճակից լուր տուող վիճակն ոչ ոք չունենք. այս հանգամանքը շատ ուշադրութեան արժանի մի բան է, որի հոգը թող քաջն ռուսահայ երիտասարդները: Վ. Պօլիս րօմանտիզմ է, Վ. Պօլիս վերացականութիւն է, Վ. Պօլիս խօսք է. այս խօսքերը նոր չեն, որ լսում են Մշակից նորա ընթերցողները. ապացոյցները գործով ենք տեսնում:

Ինչ որ և լինի Վ. Պօլիսը, բայց նրա մէջ երկու հարիւր յիսուն հազար հայ բնակիչ կայ, վասնորոյ արհամարհել նորան չէ կարելի, իսկ թողնել էլ նորան նոյն վիճակի մէջ, նոյն կաշառակեր, մուրացկան և դուռնական խմբագրիների ձեռքին, նոյն տիրացու դիպլոմատների յոյսով էլ չէ կարելի, վասնորոյ միակ միջոցը նա է, որ ռուսահայ ինտելիգենցիայից գտնէ մի երկու-երեք հոգի փոփոխականի ներքով գտնէ Վ. Պօլիս ու շարունակեն անդադար սթափեցուցիչ բռնաճնջի զարկեր տալ սոցա անպիտանութիւններին, որ խեղճ ժողովուրդը չը մնայ այս ինտելիգենցիայի երեսին ու խօսքին նայելով: Հասկացողութիւն տալու համար թէ ինչպիսի մարդիկ են սոցա մէջ տոն տուողները, հերիք է միայն ասել, որ Մասիսի իսկական խմբագիր և բոլոր յօդուածներ գործընթացի Բիւզանդ Բէշէնան և Գրասէր-Ատոմ պատեղի տարրական ուսումնարաններից թերակատար դուրս եկած են, որոնք չունենալով ոչինչ փոքր ի շատէ ընդհանուր տեղեկութիւն և զարգացում, կարող են միայն իւրաքանչիւր պատահած նիւթի վրա տակից գլխից, անվերջ անսկիզբ ջրալի և տիրացուական պոռոտախօսութիւններ անել, իսկ ամենաշատը յանուն վիկտոր Էլիզաւիայի վերացական և անհեթեթ բաներ բարբառելով, որ գործերն անգամ կը ծիծաղեն: Բայց ինչ ասել է մի այսպիսի մեծ հայկական կենտրոնում լուրջ ուղղութեամբ լրագիր չունենալ, ինչ կը նշանակէ այսպիսի մի հանդիսաւոր ճգնաժամի մէջ հրապարակային խօսքը թողնել զանազան թերութեան ձեռքին, դժուար չէ հասկանալ: Վասնորոյ շատ օւրախութեամբ լսեցի, որ Գ. Նաւասարդեան մտադիր է տեղագրութիւն Վ. Պօլիս, եթէ միայն հանդուրժանքներ ներեն: Ուստի կասեմ, որ ով որ գալու լինի ռուսահայերից այստեղ երկարօրէն մնալու և գործելու համար, այդպիսի մարդու համար գործ շատ ու շատ կայ, երբ չորս չորսը միայն Սոսիւնի նման պոռոտախօսներ են. ուրեմն ով մտադիր է գալ այստեղ ընդհանուր գործերի հոսանքին մասնակցելու համար, շատ բարի և դովելի բան կանէ: Միայն այն էլ պիտի ասած, որ այդպիսի մարդը բաւական ամուր և դիմացկուն պիտի լինի, որովհետեւ երբ և պայմանք տեսան որ մէկը չէ ուղում պարզաւ իրանց գունայով, այն ժամանակ ոչինչ կեղտոտ բան չը պիտի խնայեն նորան մնասելու և մէկ կերպով իրանցից հեռացնելու համար. մասնութիւններ թիւրքաց տէրութեան, մասնութիւններ մեր տէրութեան, մասնութիւններ ազգին էլ անպակաս պիտի լինեն: Իմ այստեղ գալու օրից ի վեր օրինակի համար ամեն բան արդէն անցել է իմ գլխով. ինչի հիշիստ, ապստամբ թիւրքի ոչ ոք էմ, ազգավնաս, ռուսաց գործիք չեմ, ինչի հիշիստ կ'ուսակից, այս ինչի դէպքից ամեն և ամեն բան անցին մինչև որ իրանք էլ յոգնած լուեցին և սկսեցին կամայական պարապմունք լուրջ կերպով այն հարցերով, որոնք յարուցվել են իմ և բարեկամներիս կողմից: Բայց անկասկած պիտի իմանաք, որ այսպիսի կեղտոտութիւն միայն ինտելիգենցիայի մէջ է, իսկ հասարակ ժողովուրդը շատ համակրական է և մաքուր: Այս բանը փորձել եմ օրինակ հետեւալ սրտաշարժ դժմոստորացիաներով. ամեն անգամ երբ բանակուել եմ ունեցել այստեղի լրագրիների հետ և երբ երևացել են նոցա մէջ փողոցային հայոյանք իմ դէմ, միւս օրը և եթէ իմ ամենաշնորհ և անմեղ զգացմունքով մարդիկ են եկել մօտս ամենահասարակ դասակարգից, իրանց համակրութիւնը և ցաւակցութիւնը յայտնելու համար. ի հարկէ այսպիսի դժմոստորացիաներ ունեցել են և ունեն իմ աչքում միայն այն նշանակութիւնը, որ հասարակ ժողովուրդը պահել է իր անմեղ պարզութիւնը և իր ազնուութիւնը ու անաչառ-գիտակցութիւնը դէպի ճշմարտութիւն խօսողը. կարծիք չը կայ որ միայն հէնց այս հերիք վար-

ճատութիւն և քաջաբերութիւն կարող է լինել բարոյապէս միշտ կազդուրվելու և մաքառուել առաջ քշելու համար ապականված պղծված ինտելիգենցիայի հետ:

Այսպէս թէ այնպէս, բայց Վ. Պօլիսը մեծ պէտք ունի մի մշտական թորակողին, որի հետ միասնալով հասարակ ժողովրդի համակրութիւնը կարող է շատ բան կատարել, քանի որ առ ժամանակ դեռ Վ. Պօլիսը կը լինի կենտրոն թիւրքաց Հայաստանի քաղաքական տնօրէնութեան: Մինչդեռ թիւրքաց ուղղութիւն տալ սոցա գործերին անհնարին է, որովհետեւ ինչպէս փորձով փորձեցի, այստեղի ինտելիգենցիան բոլորովին ոչնչով չէ զանազանում իր բարոյականութեամբ թիւրքայի բարոյականութիւնից, հեռուից տուած խորհուրդներին սոքա միշտ շատ հետամուտ ցոյց կը տան իրանց, բայց բընաւ երբեք ոչինչ չեն կատարել. հարկը անգամ իրաւունք ունեն էֆենդիի կասեն, բայց միշտ խաբէրալարաւ, կեղծաւորութեամբ և շահախնդրական ու խարդախ նպատակներով: Այս բանի մէջ և այնչափ լաւ համոզվեցի, որ եթէ աչքով էլ տեսնեմ որ Աստուած խօսում է սոցա հետ, էլ չեմ հաւատայ ոչ մէկի ճշմարտութեան: Բայց փորձեցեք խօսել այդ մարդիկներին հետ և տեսե՛ք թէ մի վայրկեանի մէջ քանի անգամ աչքերը երկնից կ'որոնեն և «ազգասիրութիւն», «լոյս», «Հայաստան» կարտասանեն: Այսպէս Վ. Պօլիս ինտելիգենցիայի ազգասիրութիւնը և այս բանի մէջ իւրաքանչիւր ռուսահային համոզվելու համար, թող իր Վ. Պօլիս եկած ժամանակ որի վրա ուղում է առանձին ուշադրութիւն դարձնէ, կը տեսնէ որ արտաքին ազգասիրութեան ամենանիւր նպատակ, կաշառ, զօջաքաղութիւն: Այս է անա Վ. Պօլիս ինտելիգենցիայի ընդհանուր պատկերը: Ուրեմն կարելի է սորա վրա չը մտածել և չը շտապել գալ Վ. Պօլիս ու գործը միայն ներում է:

Մանկուտի պապալ alter ego թիւրքերու չեանց արդէն ճանապարհ ընկաւ թիւրքի էլ միաձին գնալու համար. աչքերից լոյս, քիչ էր մէկ ժամանակաւ, միւսն էլ նորա օգնական եկաւ: Իր եղբորութիւնը թիւրքերուստեանց արդէն հիմնկողն է սկսել, լուր տարածելով այստեղ թէ էլ միաձին չէ գնում, այլ թիւրքի վաճառականութեան համար. մէկը հարցնէ երբ նա փող գտաւ «Մասիս»-ի խմբագրութեան մէջ վաճառականութիւն անելու համար, բայց ով գիտէ գուցէ Մանկուտի սարափը պիտի լինի...

Կրիտիկ Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 13 սեպտեմբեր

Թիւրքաց յոռի վարչութիւնը առած է եղբւրջը գիտեմ թէ տակաւին աշխարհիս երեսը մնացել են այնպիսի մարդիկ, որք կը կարծեն թէ այդ վարչութեան վրայ պատմութեան չափազանցութիւն են կամ յատուկ թշնամական ոգով թելադրուած: Նոյն իսկ կառավարութիւնը իր օրգաններու միջոցով կամ քաղաքական բանակցութեանց մէջ մինչև ցայժմ չէ պաշտպանած ինքզինքը որպէս կարող և համոզել լեզուով որ անմեղ, որ զրապարտաւր միայն կարող է գրեմել և գործածել:

Այստեղի իրաց վիճակին տեղեակ մարդոց մէջ կան շատեր ալ որք կը կարծեն թէ այս վարչութիւնը վատթարութեան յետին սահմանը հասած ըլլալով, անհնարին է որ տաճկաբնակ ժողովուրդներն անէլ աւելի ստրկութեան և թշուառութեան մէջ գլորեն: Սխալ գաղափար վասն զի այնպիսի նորանոր դէպքեր կը պատահին այստեղ, որ մարդկային երևակայութիւնը անգամ չէ կարող հնարել, որ ամենէն ճարտար ողբերգական և վրայասան անգամ չեն կարող մտածել ու գրել: Հազարից մէջ երկու օրինակներ մէջ բերեմք:

Մինչխառութիւնը տիրապետած տեղ մը, բնական բան է որ ոճիրներուն թիւը և սաստիկութիւնը կաւեղանան քանի մայրաքաղաքէն հեռացուի: Արդ՝ Կ. Պօլիսը մէջ անգամ ամեն օր կը պատահին այս տեսակ բաներ, և ահա նոր շրջակայները ոճրագործութիւններն անհամար են: Բայց ամենէն աւելի դժողութեան արժանի այն է որ իրաց թողով կառավարութեան պաշտօնապէս ըրած զեկուցումները, գործութիւնը և սպանութիւնը նոյն իսկ պոլի-

ցիան և պաշտօնայեք են կատարողը, և այսօր Կ. Պօլիս փողոցները և շրջակայները աւելի ապահովութիւն կայ, երբ պոլիցիականներ չեն դըրված պահպանելու համար: Պատմութիւն մէջ, որ Կ. Պօլիսը քանի մը ժամ հեռու է միայն, մէկ քանի օր առաջ երկու ժամատարմա, որ մէկ քրիստոնեայի ուղեկից տուած են եղբւր ապահովութեան համար, ապանեցին զայն և ստանկները գողցան:

Կրիտիկ թէ պոլիցիայի մարդոցմէ այսպիսի մի քանիսն ոճիր կարելի ըլլայ սպասել, վասն զի անոնք ամեն դասն կընտրվին առանց քննութեան, որք տղէտ են, աղքատ են և կարողութիւն չունեն հասկանալու իրենց պաշտօնին նուիրականութիւնը: Բայց ինչ գաղափար կը ստացուի բարձրագոյն պաշտօնային ժրա, որք կը վարուին ամենաստոր ոճրագործներու նման:

Գիշ օր յառաջ մէկ հայ վաճառական, տէրութեան գանձէն (?) աւանելը ունենալով 1200 օսմանեան ոսկի, մէկ հաւաքէ կ'առնէ, այն է տեսակ մը իրաւանակազիր, և կերթայ Կ. Պօլիս շատ մօտ քաղաքների մէկը և այնտեղի գալմազմին (sous-prefect) ներկայանալով, ոչ սակաւ զարմացմամբ, ստակը կը ստանայ շուտով: Ի դարձին վաճառականը մէկ գիւղը կը հանդիպի որ գիւղեր անցունէ: Կէս գիւղերու մօտ խանի մէջ պառկած սենեակին դուռը երկու սեամորթ մարդիկ կը կտրեն, քովի ստակը կը պահանջեն կանախով սպաննալով. Բաջասիրտ վաճառականը պահած ինչ օգուտ էր ունէ երկուքը մէկին կը սպաննէ անմիջապէս: Կուգան այդ երկու դիակները վերցունելու, կը տեսնեն թէ անոնց ճիւղի սուրբիւնը ներկ է, կը լուան և ներկայ գտնուողները կը տեսնեն, երևակայեցէք ինչ զարմացմամբ, թէ այն երկու աւազակներն են...

Քաղաքին գալմազմը և հաշուակալը, անոնք որ երկու օր յառաջ այնքան փութով և սիրով վրձարի էին ոսկիներն վաճառականին, և ապա անոր ճանապարհ ելնելէն ետքը ծածուկ հետեւած էին իրեն մինչև այն գիւղը:

Ամեն խորհրդածութիւն անօգուտ է այսպիսի մէկ իրողութեան առջև: Սա բաւական է ամեն օպտիմիստները համոզելու համար թէ ինչ երկրի մէջ կ'ապրեն: Եթէ մայրաքաղաքին շրջակայներն այսպէս են, դիւրին է մակարեւել հեռուոր գաւառներու վիճակը:

Այս լուրը քաղաքին մէջ մեծ աղմուկ հանած է երկու օրէ ի վեր, և եթէ կը կարծէք թէ այս ողբերգութեան մանրամասնութիւններու վրայ կը հետաքրքրվին «Մշակի» ընթերցողները, ներփակեալ տեղոյս ֆրանսական մի լրագրի հատուածը կը գտնեք այս նիւթին վերաբերմամբ որ իմ քաղուածս կ'ամբողջացնէ:

Ե. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագրիները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը թոյլտուութիւն չը տուեց արգելված «Presse» լրագրի խմբագրին, պատգամաւոր Կարլէին նոր լրագրի հրատարակելու «Echo d'Alsace et de Lorraine» անունով: Էլզաս-Լոթարինգիայի պաշտօնական լրագիրը այդ արգելումն արդարացնում է նրանով, որ հէնց պ. Կարլէին նոր մտածված հրատարակութեան անունը իր մէջ բողոք է պարունակում, որին կառավարութիւնը չէ կարող համբերել: Եւ ճշմարիտ, նոր լրագիրը անուանվում է «Էլզաս և Լոթարինգիայի էխօ», այն ինչ այդ միացումն հասանցների պաշտօնական անունը: Էլզաս-Լոթարինգիա է: Այդպիսով, անունը ցոյց էր տալիս, որ նոր լրագիրը հրատարակում է նահանգներին այն անունը տալ, որը նա ունի պաշտօնապէս, և որին ազգաբնակչութիւնը ընտելացել է: Կառավարութիւնը չէ կարող այդպիսի ապստամբութիւնը տանել:

—«Frankf. Zeitung» լրագրի խօսքերով, Գերմանիայի համար նոր կալօնիւններ ձեռք բերելու հարցը ընտրողական ագիտացիայի մէջ միջոց է դարձել: Առևտրական երկարադիտութեան ընկերութիւնը մէկ շրջաբերական է տարածում, որով հրաւիրում է քաղաքացիներին ձայնիք տալ յօգուտ այն կանդիդատներին, որոնք մարմադիր են պահանջել կառավարութիւնի» ստեղծել գերմանական նոր կալօնիւններ:

—Վիեննայում եղած գրականական կոնգրէսը վերջացրեց իր գործերը: Լրագրիները հաղորդում են, որ կոնգրէսը մօտեց հետեւալ ժողովը:

ռւննալ Իտալիայում, թէպէտ և չէ նշանակել, թէ որ քաղաքում պէտք է ժողովվեն:

—«Pesther Lloyd» հաղորդում է, որ Վիեննայում և Պէշտում մամուլը շարունակում է Ռուսաստանի և Աւստրիայի միապետների մէջ լինելի տեսակցութեան հարցով պարապել, բայց չէ հաւատում, որ այդ տեսակցութիւնը կայանայ, և այդ առիթով ասում է հետեւալը. «Այդպիսի տեսակցութեան համար մինչև այժմ ոչ մի քայլ չէ արած ոչ Պետերբուրգից, ոչ էլ Վիեննայից: Գիւտ ես այն էլ կասկածելի է, կը կայանայ արդեօք ռուսաց թագաւորի ճանապարհորդութիւնը դէպի Վարշավա»:

—Հռոմից լրագրիները հաղորդում են, որ Իտալական դեսպանը Լոնդոնում, գեներալ Մէնարէա ճանապարհ ընկաւ դէպի Կապո-դի-Մօնտէ արտաքին գործերի մինիստր Մանինիի հետ խորհրդակցելու այն քաղաքականութեան մասին, որին պէտք է Իտալիան հետէ կ'ապտուտում: Այդ խորհրդակցութիւններից յետ գնեւրալ Մենարէա անգլիական արտաքին գործերի մինիստրութեանը մէկ մէջօրանքում կը ներկայացնէ, որի մէջ բացատրված կը լինեն Իտալիայի հայացքը և նրա պահանջները Եգիպտոսի:

—«Times» լրագրին հաղորդում են Գուլիտտանից, սեպտեմբերի 25-ից, որ Կանդանարը բացեց իր դռները Եմբի առջև: Բաղարները և շրջակայ գիւղերը մասամբ կորուստեցան զորքերից: Էմբը չորս կամ հինգ օրից յետ մտադր է արշաւել Հերատի վրա:

—Պրագայի «Politik» լրագրին հեռագրում են Բարցեւոյայից, որ նորերում կապացաւ այդ քաղաքում սօցիալիստների միջազգային կոնգրէս: Ժողովին ներկայ էին 500 հոգի, որոնց թուում բազմաթիւ ռուս սօցիալիստներ:

—Արտըր, որ այժմ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ է նշանակված, Գարֆիլդի մահից յետոյ, ընդունեց իր պաշտօնը և այս օրերս եկել է Վաշինգտոնից: Նիւ-Իորկ իր մասնաւոր գործերի համար Ատոմ են որ Գարֆիլդի սպանող Գիտո կը դատվի վաշինգտոնի մէջ: Նրան կը պաշտպանի նրա ազգական մի աղբօկաւ:

—Լրագրիներին Կ. Պօլիսը հաղորդում են, որ Մէկկայում անկարգութիւններ են պատահել, որոնք ուղղված են եղել թիւրքաց իշխանութեան և մեծ չէրիֆի դէմ: Տեղական օրէնքների հիման վրա հողային սեփականութեան իրաւունք ունեն մասնատականներից միայն նրանք, որոնք խալիֆի հպատակութեան տակ են գտնվում: Այն ինչ, թիւրքաց իշխանութիւնը թողնէ տուել այդ բանը Նաֆֆայի բնակիչներից մի քանիսներին: Այդ բանը կուի պատճառ դարձաւ տեղական բնակիչների և եկւորների մէջ: Հեռագրական հաղորդակցութիւնները Ձեզդայի և Մէկկայի մէջ նորերում կորուցան թաւառական արարների խորհով:

—«Times» լրագրին Բերլինից հեռագրում են, սեպտեմբերի 26-ից, որ «Freiheit» լրագրի խմբագիր Մօտ լինելի ընտրութիւններին Բերլինի սօցիալական կուսակցութեան կանդիդատ կառաջարկվի բէյնստագում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶՅԱՅԻՑԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 սեպտեմբեր: Երէկ ներկայացան թագաւորին 11 էկսպերտներ, որոնց թւում խալիֆի պրօֆէսոր Գորգէէն-Կո, որ մի կարճ ճառ ասաց, պոլիցիստ Մարիօլ, իշխան Ելերաւտով Մօսկվայից: Թագաւոր կայսրը ողորմաբար և մանրամասնութեամբ հարցնում էր իւրաքանչիւր էկսպերտին նրա անցեալ և ներկայ ծառայողական գործունէութեան մասին: Նորին Մեծութիւնը վերջը սրտազին խօսքերով յոյս յայտնեց, որ էկսպերտները Ս. Պետերբուրգ գալու իրանց իսկական նպատակին կը հասնեն: Արբաժ կը ներկայանան մնացած էկսպերտները: Նրանց առաջարկված է իրանց ցանկութեան համեմատ երկու խումբերի բաժանվել. խմբիցների և զաղթականական հարցերը քննելու համար:

10 ՆՊՈՆ, 24 սեպտեմբեր: Անգլիական բանկը 5% դիսկոնտ նշանակեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 սեպտեմբեր: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 93 ռ. 37 Կ., երրորդ 94 ռ. 5 Կ., չորրորդ 93 ռ. 5 Կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակր արժէ 224 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 221 ռ. 95 Կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 91 ռ. 12 1/2 Կ., երկրորդ 91 ռ. 25 Կ., երրորդ 91 ռ. 5 Կ., ոսկի 7 ռ. 67 Կ.: Ռուսաց 1 ռ. Լօնդոնի վրա արժէ 25,81 1/2 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, Բարլիգի վրա արժէ 273 Ֆրանկ, 50 սանտիմ Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

